ՔՐԴԱԿԱՆ ՑԵՂԵՐԸ VII—X դդ.
(ըստ արաբական աղբյուրների)

ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆ

Արաբական աղբյուրներում քրդական ցեղերը հիշատակվում են ռազմա-ցեղային մի քանի անվանումներով՝ «կաբիլա», «աշիրա», «թաիֆա» և այլն։ «Կաբիլան» ցեղային միություն էր, որը կարող էր ընդգրկել արյունակցական հեռավոր կապեր ունեցող խմբերին[1]։ Իսկ «աշիրան» արյունակցական մերձավոր խումբն[2] էր, որն ուներ ռազմական ֆունկցիա և երբեմն էլ միավորում էր այլ խմբերի՝ իրենց ռազմական կազմակերպություններով։ «Թաիֆան» նշանակել է որևէ ցեղի կամ ցեղային միության մաս։ XIII դ. արաբ լեզվաբան Իբն Մանզուրն ընդգծում է, որ մեկից մինչև հազար մարդը կարող էր համարվել «թաիֆա»[3]։ Քրդերի մասին խոսելիս արաբ հեղինակների օգտագործած արաբական տոհմացեղային (ջամաա, կաում, ֆախդ, ջիլ) անվանումները միշտ չէ, որ համապատասխանել են իրականությանը և կրել են պայմանական բնույթ։ Այսպես, օրինակ, քրդական հայտնի «ալ-Հադբանիյա» խոշոր ցեղային միությունը հաճախ կոչվել է «կաբիլա», «աշիրա» և այլն։

Քրդական ցեղերը, ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի, ունեցել են ցեղային նվիրապետություն։ Մինչև X դ. մեզ ծանոթ են ցեղային վերնախավի երկու դասի անվանումներ՝ «մուկդիմ» (կամ մուկադիմ, հոգ. մուկադիմուն) և «ռայիս» (հոգ. ռուասա)։ Սրանցից առաջինը նշանակում է առաջնորդ, գլուխ։ Այն ավելի շատ ռազմական կոչում էր, որի կրողը ղեկավարում էր ցեղի անդամներին ընդվզումների և զինական այլ շարժումների ժամանակ՝ կրելով ռազմական պատասխանատվություն[4]։ Ռայիս անվանվում էր ցեղապետ ֆեոդալը, որի իշխանությունը ցեղում կամ ցեղային միությունում կրում էր միանձնյա և ժառանգական բնույթ։ Ռայիսն իբրև ֆեոդալ, որպես կանոն, ուներ «կալա» (բերդ) կամ «հիսն» (ամրոց) և որոշակի քանակությամբ զորք[5]։

Արաբ հեղինակները X դ. քրդական իրականությունում հիշատակում են ռազմաքաղաքական մեկ այլ ինստիտուտ։ Դա ամիրների[6] ինստիտուտն էր, որի երևան գալը կապված էր խալիֆայությունում IX—X դդ. ֆեոդալական անջատողականության բուռն վերելքի հետ։ Ամիրը համարվում էր առանձին տարածքում բնակվող ցեղերի ռազմաքաղաքական գերագույն առաջնորդը։ X դ. երկրորդ կեսից ամիրների ինստիտուտը լայնորեն տարածվեց քրդական իրականությունում և նրա ենթակայության ներքո շարունակվեց գոյատևել նաև ռայիսների դասը։

Արաբական երկարատև տիրապետության հետևանքով զգալի տեղաշարժեր կատարվեցին նաև քուրդ ժողովրդի կյանքում։ Ֆեոդալական շահագործման ու զանազան կեղեքումների, ինչպես նաև ռազմաքաղաքական ու

---

[1] ابن منظور ، لسان العرب ، ج . ١٤ القاهرة ، ١٣٠٢ ص ٧٥-٧٦

[2] ابن منظور ، لســان العــرب ج . ٦ القاهرة ، ١٣٠٠ ص ٢٥٠ .

[3] ابن منظور ، لسان العرب ، ج . ١١ ، القاهرة ، ١٣٠١ ، ص ١٣٠

[4] ابن الاثير ، الكامل فى التاريخ ، ج ٥ ، القاهرة ، ١٣٥٧ ، ص ٢٥٠ ...

[5] ابن الاثير ، الكامل ، ج ٦ ، ص ٧٧ ، ١٢٠ ، ١٩٠ ...

[6] Hilal as-Sabi, kitab al-Wuzara, ed. by H. F. Amidroz, Leiden, 1904, p. 148.